ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի դեկտեմբերի 23-ի, ժամը 12:00-ի ընդլայնված նիստի

1. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2021 թվականի ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների և 2022 թվականի բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշների մասին:**
   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

2. **«Միներվա» ծրագրի շրջանակներում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2021-2026 թթ. «Բաց գիտության» ռազմավարությունը հաստատելու մասին:**
   Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

3. **«Միներվա» ծրագրի շրջանակներում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Բաց հասանելիության» քաղաքականությունը հաստատելու մասին:**
   Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

4. **«Միներվա» ծրագրի շրջանակներում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պահոցի գործունեության կազմակերպման և կարգավորման կանոնակարգը հաստատելու մասին:**
   Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

5. **Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի իրականացման 2021 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունների մասին:**
   Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

   1) **«Քաղաքական ինստիտուտները և տնտեսական զարգացման որակն ու գերակայությունները ՀՀ-ում»** (ծրագրի գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Յու.Մ.Սուվարյան**):

   2) **«Պետական փոխառու միջոցների ներգրավման միջոցով տնտեսական զարգացում ապահովելու հնարավորությունները Հայաստանի**

Հանրապետությունում» (ծրագրի գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կ.Հ.Գրիգորյան**):

Ծրագրերը քննարկվել և երաշխավորվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 15-ի հարցման կարգով նիստում (արձանագրություն N 17):

6. ՀՊՏՀ գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի առաջարկությամբ՝ բակալավրական ուսուցման 031101.00.6 «Տնտեսագիտություն» և 041201.01.6 «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» մասնագիտությունների կրթական ծրագրերի նոր ուսումնական պլանները հաստատելու և **2022-2023** ուսումնական տարվանից սկսած ուսումնական գործընթացը նոր ուսումնական պլաններով իրականացնելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

7. ՀՊՏՀ գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի առաջարկությամբ՝ մագիստրոսական ուսուցման 031101.00.7 «Տնտեսագիտություն» մասնագիտության՝ 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» և 031101.16.7 «Մակրոտնտեսական վերլուծություն» կրթական ծրագրերի նոր ուսումնական պլանները հաստատելու և **2023-2024** ուսումնական տարվանից սկսած ուսումնական գործընթացը նոր ուսումնական պլաններով իրականացնելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

8. ՀՊՏՀ գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի առաջարկությամբ՝ մագիստրոսական ուսուցման 031101.00.7 «Տնտեսագիտություն» մասնագիտության՝ 031102.02.7 «Տնտեսագիտության տեսություն» կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը հաստատելու և **2024-2025** ուսումնական տարվանից սկսած ուսումնական գործընթացը նոր ուսումնական պլանով իրականացնելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

9. ՀՊՏՀ գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի առաջարկությամբ՝ մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության՝ 041201.06.7 «Բանկային գործունեության կազմակերպում» կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը հաստատելու և **2022-2023** ուսումնական տարվանից սկսած ուսումնական գործընթացը նոր ուսումնական պլանով իրականացնելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

10. ՀՊՏՀ գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի առաջարկությամբ՝ մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ»

մասնագիտության՝ 041201.05.7 «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» 2 տարի տևողությամբ կրթական ծրագրի լիցենզիան դադարեցնելու, նոր՝ «Ֆինանսական շուկաներ» կրթական ծրագիրը և դրա ուսումնական պլանը հաստատելու, ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատմանն ու լիցենզավորմանը ներկայացնելու և **2023-2024** ուսումնական տարվանից սկսած «Ֆինանսական շուկաներ» կրթական ծրագրով ընդունելություն իրականացնելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

11. ՀՊՏՀ գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի առաջարկությամբ՝ մագիստրոսական ուսուցման 041201.01.7 «Ֆինանսներ» մասնագիտության 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» և 041201.04.7 «Կորպորատիվ ֆինանսներ» 2 տարի տևողությամբ կրթական ծրագրերի լիցենզիան դադարեցնելու, նոր՝ 1,5 տարի տևողությամբ 041201.03.7 «Հանրային ֆինանսներ» և 041201.04.7 «Կորպորատիվ ֆինանսներ» կրթական ծրագրերի ուսումնական պլանները հաստատելու, ՀՀ ԿԳՄՍ նախարարության վերալիցենզավորմանը ներկայացնելու և **2023-2024** ուսումնական տարվանից սկսած 1,5 տարի տևողությամբ կրթական ծրագրերով ընդունելություն իրականացնելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

12. ՀՊՏՀ գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի առաջարկությամբ՝ ՀՊՏՀ բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններում 2022-2023 ուսումնական տարվանից սկսած համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի, վիճակագրության ու տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնների կողմից սպասարկվող համակարգչային հմտությունների, ինֆորմատիկայի, ծրագրային ապահովման տարբեր միջոցների, համակարգչային գրաֆիկայի, տվյալների մշակման ու վերլուծության, տնտեսամաթեմատիկական մոդելավորման, մոդելավորման, էկոնոմետրիկայի և վիճակագրական դասընթացների լաբորատոր պարապմունքների բաղադրիչը գործնական պարապմունքների բաղադրիչին միացնելու, գործող ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու և ակադեմիական խմբերը գործնական խմբերի հաստատված նորմատիվով բաժանելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

13. 2021-2022 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում «Առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսական կրթական ծրագրերում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգերում» փորձառության գնահատման առնչությամբ ժամանակավոր փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

14. Ուսանողական խորհրդի 2021 թվականի ֆինանսական գործունեության արդյունքների մասին:

Զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ **Գ.Ռ.Մելիք-Սահակյան:**

15. Ընթացիկ հարցեր:

1) Լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Աննա Ռուբենի Ղարսլյանի «Արդի հայերենի իրավաբանական տերմինները»** մենագրության հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

Մենագրությունը հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի՝ 2021 թվականի նոյեմբերի 18-ի, ժամը 12:00-ի նիստում (արձանագրություն N 6):

2) Ֆինանսական հաշվառման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Աշմատի Հակոբյանի** և նույն ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Անուշ Աշոտի Գասպարյանի «Հաշվապահական հաշվառումը առևտրային բանկերում»** խնդրագրքի հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

Խնդրագիրքը հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 18-ի, ժամը 12:00-ի նիստում (արձանագրություն N 6):

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան